մղը.

Ի դեկտեմբերիս և յառաջ, այնքան չեր էր օդն, մինչ զի ի յունվարի մէկն բերի ի չէնկէլ գեղէն զմի խնձոր նորոգ հասեալ, և երկու սալոր կարմրացեալ։ խնձորն էր ըստ չափու մեծ ընկզոյ։ Ահա այսքան չեր էր եղանակն. իսկ չէնկէլ գեղն է յանդիման քուռու չէշմէին ի մասին անատօլու, ուր հարցաք զպարտիզպանսն. և ասացին թէ մինչև ցայսօր չիք մեր տեսեալ այսպէս։... Թագաւորն մեր սուլթան մուստաֆան ունի զերկուս եղբարս, այսինքն սուլթան պայազիտ և սուլթան օհրան։ Արդ ի յունվարի 24 եչ. սուլթան պայազիտն մեռաւ...։ Ի յունվ.ի 5 կիր. ի հետևեալ գիշերի եղև հրկէզ ի էէնիքեօյ. և այրեցաւ ի քեօյպաշիէն մինչև մերձ տանն աբիկենց. և այրեցան բազում տունք և եկեղեցիք. բնաւք յունաց։... [Հ. Ցակ. Զամչ. առ Մխիթարեանս, 1771 յունվ. 30. Ղալաթիա)։

մղթ.

Մտեալ ի նաւն ի 1770 ի յուլիսի 28, յաջողութեամբ տեառն հասի ողջամբ ի Կալկաթա ի սեպտեմբ. 5, զերծեալ ի բազում վտանգաց ծովուն և գետոյն Գանգէսի։ Ի գալն իմ ի բազում թշուառութեան տեսի զերկիրն բանգալու ողջոյն, Նախ՝ վասն սաստկութեան սովուն եղելոյ առ երաշտութեան որ տևէր տակաւին մինչև ի գալուստ իմ. յորմէ մեռան հոգիք ըստ ոմանց՝ քսան միլիոն [?] և ըստ ոմանց՝ երեսուն [?][1], և դիակունք մեռելոցն անկեալ դնէին յամենայն փողոցս քաղաքիս Կալկաթու համապազ և մինչև ցարդ երևին տակաւին։ Երկրորդ՝ վասն պէսպէս հիւանդութեան և մահուան երևելեաց բազմաց իսկ։ Երրորդ՝ յաղագս գլխովին պակասութեան տուրևառութեան վաճառականաց, վասն բռնացեալ տէրութեան անգղիացւոց, ովք նուաճեալ ունին ընդ իշխանութեամբ զերկիրն բանգալու ողջոյն և զայլ երևելի կողմանս աշխարհին հնդկաց և զշահն ինքեանք տանին։... Վասն երկրիս և մանաւանդ վասն քաղաքիս կալկաթու ծանիք համառօտիւ, զի առաւել քան զսոդոմ և զգոմոր է։... Օդ երկրիս վատ է յոյժ և մանաւանդ քաղաքիս կալկաթու. յորս յաճախեալ են պէսպէս ախտք ցաւոց. յորոց գլխաւորք են ախտն ծիւրական և ուռոյցք են. յորոց բազումք մեռանին։ (Հ. Սուքիաս առ Մխիթարեանս, 1771 փետր. 20 և 26 ի Բանգալա, ի Կալկաթա)։

յ.

Լէհու երկրէն եկան մին քէնի հայ վաճառական որ մինն կոչի պետրոս պոկտանովիչ որ զսա կայսրն կոչեցիւր կայսերական խարչով որ ձիյեան քէր կայսրին առմատային խիստ ունէօր մարդ է և խիստ հարկիք ունի կայսրին քովն է թագուհուն քովն մեծ համարձակութիւն ունի բովանդակ քօոթէն և մեծամեծաց քովն և մին ոսկի մէտալ կախեց վիզին կայսրն և տվաւ նօպիլթութիւն զսա խիստ բարի և հեզ անց է և դատի որ մեր ազգին համար խնդրվացք անէ կայսրէն և թաքուհէն, իրաւի լաւ քազիօն էր որ լինէր հարկաւոր մին քահանու ի պեչ որ ֆանտամէնդով բան մի կլար ազգին մերոյ և այսմ ժամանակիս պատրաստվէր օթէվան հայոց ասքին զի որքան զզվացէն տաճկի երկրէ սակաւ ժամանակիս բազմութիւն լինէր և երէվեր ասէն հայոց ի մէչ աւստրիայու բայց և վարդապետք և եկեղէցականքն լինէր ի ձեր վանքէն։ (Անտոն Ճէնըրիկովիչ առ Մխիթարեանս, 1771 փետր. 20. Վիեննա)։

---

1. Ուրիշ թուղթի մը մէջ հերքուած ու սրբագրուած են այս թիւերը։